ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4184-Ա « 14 » հոկտեմբերի 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 1218-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1218-Ն որոշումը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի «ը» կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին և «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 20-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1218-Ն որոշման N 2 հավելվածում նշված տարածքների հատակագծերը:

2. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենին՝

1) Որոշումը պատշաճ կերպով ուղարկել Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ Որոշմամբ օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող՝ գույքային իրավունքներ ունեցող անձանց.

2) Որոշումը ներկայացնել հրապարակման ոչ պակաս, քան 3000 տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցում.

3) Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չորս ամսվա ընթացքում կազմել և ստորագրել Որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրությունները:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի, «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական

ընկերության տնօրենի և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ